ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵԲԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Դեբետ համայնք, գ.Դեբետ, 6-80-55

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<< 29 >> մարտի 20 18 թվականի N 16-Ա

06-034-0118-003 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով քաղաքացի Վահան Դավթի Հարությունյանի դիմումը, Հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 20,04,1991թ. թիվ 1 որոշումը, ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագիրը 22.02.2018թ. գրանցամատյան թիվ 851, ՄԵԼ ԵՎ ՄԻԼ գեոդեզիայի և քարտեզագրության կենտրոն ՍՊԸ-ի կողմից կազմված հատակագծերը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով, ՀՀ <<Քաղաքացիական օրենսգրքի>> 188-րդ հոդվածի, 2-րդ կետի 4-րդ մասով, ՀՀ ՀՕ 60-րդ և 64-րդ հոդվածներով, Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին ՀՀ ՀՕ 510-Ն օրենքի 7-րդ հոդվածի 1-ին կետով

Ո ՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Վերականգնել և օրենքի ուժով ճանաչել 06-034-0118-0003 ծածկագրի տակ գտնվող 0,46785 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասի՝ խոտհարքի նկատմամբ Վահան Դավթի Հարությունյանի /ծնվ. 29,04,82թ./ սեփականության իրավունքը:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասից հատկացած 0,45 հա հողամասն անհատույց սեփականության իրավունքով վերահատկացնել, իսկ հատկացվածից ավել զբաղեցրած 0,01785 հա հողամասի նկատմամբ օրենքի ուժով ճանաչել Վահան Դավթի Հարությունյանի սեփականության իրավունքը:
3. Հողամասը չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի գտնվում ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, հողամասի սեփականության իրավունքի ճանաչումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և /կամ/ չի առաջացնում սերվիտուտ:
4. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
5. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Լոռու տարածքային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՇՈՏ ՂԱԶԱՐՅԱՆ

20 18 թ. _____ ____

գ. Դեբետ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵԲԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Դեբետ համայնք, գ.Դեբետ, 6-80-55

ՈՐՈՇՈՒՄ

<< 29 >> մարտի 20 18 թվականի N 17-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴԵԲԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ և ԾԱԽՍԵՐԻ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի դրույթներով

որոշում եմ՝

Հաստատել Դեբետ համայնքի 2018 թվականի փոփոխված բյուջեի եկամուտների և ծախսերի եռամսյակային համամասնությունները համաձայն հավելվածի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՇՈՏ ՂԱԶԱՐՅԱՆ

20 18 թ. _____ ____
գ. Դեբետ